# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲՆՄԱԿԱՆՔ

* Շբ. 4 Հոկտ.— Տօն խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնատան մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Նորեհ Արղ. Մարֆուղէլեան:

* Կիր. 5 Հոկտ.— Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Արղ. Ղարիպեան:

* Ուր. 10 Հոկտ.— Ս. Գէորգի նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց համանուն վանքին եկեղեցիին մէջ. Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.:

* Շբ. 11 Հոկտ.— Ս. Գէորգայ Զօրավարին: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգի վանքի եկեղեցիին մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան: Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետը խօսեցաւ Հայ եւ Ղպտի եկեղեցիներու եղբայրակցութեան մասին: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց նոյն վանքի Տեսչէն: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

— Կէսօրէ ետք, Միաբան Հայրեր, Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոսի գլխաւորութեամբ, «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբավայրերու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան:

* Կիր. 12 Հոկտ.— Տօն Վարագայ Ս. Խաչին: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ եւ քարոզեց՝ ներկայացնելով նախ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Առաջինի ընտրութեան պարագաները եւ խօսելով անոր գահակալութեան 14 տարիներու ընթացքին Մայր Աթոռոյ կատարած նուաճումներուն մասին, եւ ապա անդրադառնալով օրուան տօնին, ներկայացուց զայն որպէս Հայուն խաչի տօնը, իբրեւ արդիւնքը այն հրաշքին՝ որով Եօթներորդ Դարուն Վարագայ լերան վրայ պիտի յայտնուէր մասունք մը Քրիստոսի խաչափայտէն՝ հոն թաղուած Ս. Հռիփսիմէ կոյսին կողմէ: Քարոզէն ետք Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոսի գլխաւորութեամբ, կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք Ն. Ս. Օծութեան օծման 14րդ եւ ծննդեան 60րդ տարեդարձներուն առթիւ, որուն ընթացքին Տաճարին բոլոր Հայկական զանգերը զուարթօրէն կը զօղանջէին:

— Թամլէի Ս. Գէորգ վանքի աւանդական տօնախմբութեանց նախագահեց տեղւոյն հովիւը՝ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեան:

* Շբ. 18 Հոկտ.— Ս. 72 աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթը՝ Ս. Գէորգի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սիփան Արղ. Մխսեան:

* Ուր. 24 Հոկտ.— Թարգմանչաց նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Շբ. 25 Հոկտ.— Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Նորեհ Արղ. Մարֆուղէլեան: Ապա, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս եւ ազգիս հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի, ինչպէս նաեւ իր տիկնոջ եւ ծնողաց հոգիներուն համար: Նոյն արարողութեան նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Շբ. 1 Նոյմ.— Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհաննու: Այսօրուան Ս. Պատարագը, որ սովորաբար կը մատուցուէր Ս. Յարութեան Տաճարի գաւթին արեւելակողմը գտնուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ, մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, Ս. Յարութեան Տաճարի նորոգութեանց պատճառաւ գաւիթը շինուածական նիւթերով լեցուն ըլլալուն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աղան Արղ. Պալիօզեան:

* Բշ. 3 Նոյմ.— Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սիփան Արղ. Մխսեան:

* Շբ. 8 Նոյմ.— Ս. Երկոտասան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: ժամարարն էր Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան:

— Վաղուան Գիւտ Խաչի տօնին առթիւ, կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբավայրերու հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հնդկաստանէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Ս. Ուխտիս միաբան Հոգշ. Տ. Գեղամ Վրդ. Զաքարեան:

* Կիր. 9 Նոյմ.— Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղամ Վրդ. Զաքարեան: Ս. Պատարագէն ետք կազմուեցաւ մեծահանդէս թափօր, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի, որ նախ իջաւ Գիւտ Խաչի վայրը եւ ապա բարձրանալով Ս. Գերեզմանին շրջափակը՝

digitised by A.R.A.R.@

երեք անգամ դարձաւ Ս. Գերեզմանին եւ ապա Պատմուճանքին շուրջ։ Գերշ. Սրբազանը ամպհովանիի տակ եւ Ս. Աստուածածնայ մասունքը ի ձեռին կ'օրհնէր Տաճարը լեցուցած բազմութիւնն ու դպրոցական աշակերտութիւնը։ Ս. Գերեզմանի դրան երգուած Աւետարանէն եւ խնկարկութենէն ետք, պատկառելի այս Թափօրը իջաւ դարձեալ Ս. Լուսաւորչի եկեղեցին, ուր վերջ գտան օրուան հանդիսութիւնները։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս ծայրագոյն վարդապետութեան աստիճանները շնորհեց Կալիֆորնիոյ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Գեղամ Վրդ. Զաքարեանին։ Առաջնորդողի պաշտօնը կը վարէր Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան։

* Ուր. 21 Նոյմ.— Տօն Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի։ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան։ Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս բարերարուհի Աղաւնի Ճէվահիրճեանի եւ պարագայից հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի։ Ապա Միաբանութիւնը պատուասիրուեցաւ վանքի Տնտեսութեան, Տեսուչ Հոգշ. Տ. Նարեկ Աբղ. Մարֆազէլեանի կողմէ։

* Կիր. 30 Նոյմ.— Բարեկենդան Յիսնակի Պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Աբղ. Ղարիպեան։

* Եշ. 4 Դեկտ.— Ընծայումն Ս. Աստուածածնի։ Առաւօտուն, Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոսի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ։ Հոգշ. Հայրը խօսեցաւ իր ներշնչեալ քարոզը, բնաբան ունենալով «Ձեր ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին»։ Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ազգային բարերար Կալուստ Կիւլպէնկեանի եւ Կիւլպէնկեան գերդաստանի համայն ննջեցեալներու հոգիներուն ի հանգիստ։

* Ուր. 12 Դեկտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Շբ. 13 Դեկտ.— Ս. Առաքելոց եւ առաջին լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բարթողիմէոսի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Աբղ. Ղարիպեան։

* Կիր. 14 Դեկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս. ժամարարն էր Հոգշ. Տ. Աղան Աբղ. Պալիօզեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Կիւլպէնկեան բարերար գերդաստանի ննջեցեալներու հոգիներուն համար, նախագահութեամբ վանքի տեսուչ՝ Հոգշ. Տ. Նարեկ Աբղ. Մարֆազէլեանի։

* Դշ. 17 Դեկտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Եշ. 18 Դեկտ.— Տօն Ս. Հարցն Եգիպտացւոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարի մատրան մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան։

* Շբ. 20 Դեկտ.— Ս. Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. ժամարարն էր Հոգշ. Տ. Սիփան Աբղ. Մխեան։ Վերաբերումը կատարուեցաւ Տաճարի ներքին գաւիթը գտնուող Ս. Նիկողայոսի սեղանին վրայէն։

* Կիր. 21 Դեկտ.— Բարեկենդան Ս. Յակոբայ Պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, Արժ. Տ. Կարապետ Աւագ Քհնյ. Անդրէասեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ։

— Ս. Կոյսի Յղութեան հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։

* Բշ. 22 Դեկտ.— Յղութիւն Ս. Աստուածածնի։ Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ եւ քարոզեց օրուան խորհուրդին շուրջ։

* Ուր. 26 Դեկտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան

* Շբ. 27 Դեկտ.— Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Աբղ. Մարֆազէլեան։

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

* Ուր. 26 Դեկտ.— Եւրոպացւոց Ս. Ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գերշ. Եպիսկոպոսներու եւ Հոգշ. Վարդապետ Հայրերու, շնորհաւորական այցելութեան գնաց Ֆրանչիսկեանց Կուստոսին, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին, Անգլիքաններու Արքեպիսկոպոսին եւ Արաբ-Անգլիքաններու Եպիսկոպոսին։ Իսկ. Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., ընկերակցութեամբ Հոգշ. Հայրերու, նոյն առթիւ այցելեց Յոյն-Կաթոլիկներու Եպիսկոպոսին, Հայ-Կաթոլիկներու եւ Մարոնիթ համայնքի մեծաւորներուն եւ Լուտերականներու եւ Արաբ-Լուտերականներու երէցներուն։

digitised by A.R.A.R.@